

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de Raymond H. Kévorkian, Bibliothèque nationale de France, Paris, 1996, 256 p.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՄԻՋԵՎ.
ԵՐԵՔՀԱԶԱՐԱՄՅԱ ՔԱՂԱՔԱԿԹՈՒԹՅՈՒՆ:
ԽՄԲ.՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՓԱՐԻԶ, 1996, 256 էջ»

1996 թ., իրավամբ, կարելի էր համարել հայկական մշակույթի տարի Ֆրանսիայում: Նամտ քաղաքում դեռևս մարտ ամսին կազմակերպվեց հայ հնագույն և անտիկ մշակույթին նվիրված ցուցահանդես, որն իր դռները բացեց այցելուների առջև 1996 թ. մարտի 23-ին: Հրապարակվեց նաև այդ ցուցահանդեսի նյութերին նվիրված մի նկարազարդ հատոր, Լուար-Ատլանտիկ հնագիտական թանգարանի զվարճող ավանդապահ Ժակ Սանտրոյի ընդհանուր խմբագրությամբ, ուր Հայաստանի հնագետների լայն մասնակցությամբ քննության են առնվում հայոց հնագիտական մշակույթի բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում են հիմնականում նախագրային Հայաստանին: Այս ցուցահանդեսի տրամաբանական շարունակություն կարելի է դիտել Փարիզի Ազգային գրադարանի հովանու ներքո հունիսի 12 - հոկտեմբերի 20-ը կազմակերպված ցուցահանդեսը, որն անվանված էր «Հայաստանը Արևելքի և Արևմտքի միջև. երեքհազարամյա քաղաքակրթություն»: Ցուցահանդեսի կազմակերպիչն ու ոգին էր Ազգային գրադարանի աշխատակից, Նուբարյան մատենադարանի տնօրեն Ռայմոնդ-Հարություն Գևորգյանը:

Այս ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցեցին Ֆրանսիայի և Հայաստանի նախագահները, Ն.Ա.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկահիշատակ Գարեգին Ա.-ը: Ցուցահանդեսի բացառիկ հաջողությունը պայմանավորված էր նաև նրա շրջանակներում կազմակերպված գիտական նստաշրջաններով և, անշուշտ, Հարություն-Ռայմոնդ Գևորգյանի խմբագրությամբ լույս ընծայված «Հայաստանը Արևելքի և Արևմտքի միջև. երեքհազարամյա քաղաքակրթություն» գրքով:

Ներկա գրախոսության մեջ փորձենք ներկայացնել այդ աշխատանքի նպաստը հայագիտությանը: Հմուտ խմբագիրը կարողացել է գրքի ստեղծմանը մասնակից

դարձնել Հայաստանի և Ֆրանսիայի բոլոր այն մասնագետներին, որոնք ասելիք ունեն հիշյալ հարցերի լուսաբանման խնդրում: Գիրքն ունի առանցքային մշակակություն, քանի որ խմբագրի մպատակը եղել է ոչ այնքան Հայոց պատմության իրադարձությունների և մշակութային ներդրման պարզ շարադրանքը, որքան Հայաստանի փոխհարաբերությունների պատմությունը հարևան քաղաքակրթությունների հետ մինչև XVIII դարի վերջը, Հայաստանի մշակութային ավանդի և ժողովուրդներից վերցրածի վերհանումն ու բազմաոտեսակ նյութերի դասդասումը: Այս տեսանկյունից աշխատանքի մտահղացումն ինքնատիպ է, մոտեցումը՝ յուրօրինակ ու անմխադես:

Գիրքն սկսվում է Ֆրանսիայի Ազգային գրադարանի միջազգային, Ինստիտուտի անդամ Ժան Ֆավիեի միջնորդությամբ, ուր հեղինակը խոսում է XX դարի հայ-ֆրանսիական փոխհարաբերությունների, ֆրանսահայ գաղութի դերի մասին և անդրադառնում Ֆրանսիայի Ազգային գրադարանի հավաքածուներում հայկական նյութերի հավաքման աշխատանքներին և հիշատակված ցուցահանդեսի մշակակությանը իր երկրի հոգևոր կյանքում: Ներածության մեջ Հարություն Գևորգյանը համառոտ գծերով ֆրանսիացի ընթերցողին է ներկայացնում Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը Մերձավոր Արևելքում ձևավորված խաչմերուկում, Հայոց թագավորությունների կապերը հին աշխարհի հզոր կայսրությունների միջև: Անդրադառնում է հումանիտարական և քրիստոնեական մշակույթում Հայաստանի ավանդին, XIII-XVIII դարերի համաշխարհային առևտրում նրա վաճառականների ներդրմանը, Մոնղոլական պետության, Իրանի, Թուրքիայի և Եվրոպական պետությունների միջև դիվանագիտական փոխհարաբերություններում հայազգի գործիչների դերին, ուշ միջնադարի հայկական մշակույթի արևմտյան՝ մասնավորապես ֆրանսիական կողմնորոշմանը:

Գրքի առաջին գլուխն անվանված է «Տարածքային և ժամանակային ժառանգություն», ուր հրապարակված են Բ. Հարությունյանի «Աշխարհագրական սահմանները», Գ. Տիրացյանի «Ուրարտուից Հայաստան. մշակութային ժառանգություն» և Ռ. Մանասերյանի «Հայաստանը և հելլենիստական Մերձավոր Արևելքը Տիգրան Մեծի ժամանակ»: Բ. Հարությունյանը համառոտ շարադրանքով նկարագրում է Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները, ջրային ռեսուրսները, հայկական լեռնաշխարհ տանող կիրճերը, ամենակարևոր պատմական ուղու՝ Արքունական ճանապարհի մշակակությանը, ըստ Աշխարհագրության անդրադառնում է Մեծ և Փոքր Հայք աշխարհներին և Կիլիկիայի նկարագրությանը, այն տարածքներին, որոնց վրա ձևավորվել է հայ ժողովուրդը և հիմնել պետություններ: Հեղինակն անդրադառնում է Հայկական լեռնաշխարհի աշխարհաքաղաքական դիրքին և մշակակությանը «քաղաքակրթությունների խաչմերուկում»: Գևորգ Տիրացյանը անդրադառնալով մ.թ.ա. IX-VI դարերից Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձաններին (քաղաքաշինություն, ճարտարապետություն, հագուստ, կավագործություն, մետաղամշակություն, քարերի մշակություն), վեր է հանում դրանց ամփոփական, ժառանգական կապը հելլենիստական կոմագենեի և հայոց մշակույթի, նրա կապերը հին աշխարհի այդ քաղաքակրթությունների շաղկապվածությանը: Ռ. Մանասերյանը ընդհանուր գծերով ներկայացնում է Տիգ-

րան Մեծի դարաշրջանի Հայաստանը Մերձավոր Արևելքի հելլենիստական պետությունների ընտանիքում, նրա ստեղծած կայսրության դերը Արևելքը Արևմուտքի հետ կապող ճանապարհների ու մշակույթների հանգուցակետում:

Գրքի երկրորդ գլուխը վերնագրված է «Մշակութային փոխանակումներ»: Այստեղ առանձին հոդվածներով հանդես են եկել Ժ.-Պ. Մահեն («Ճանաչել գիմաստություն. հնագույն հայ թարգմանիչների ծրագիրը»), Գ. Տեր-Վարդանյանը («Միաբարակա միջավայրի մատենագրությունը»), Կ. Յուզբաշյանը («Հագմակողմանիությունը միջնադարյան պատմագրության մեջ»), Պ. Մուրադյանը («Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը»), Գ. Կարազյոզյանը («Հայաստանն ու հայերը ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ»), Ֆ. Պելլիսոն-Լառոն («Հայաստանը և հայերը XVII և XVIII դարերի ֆրանսիական թատրոնում և գրականության մեջ»), Ռ. Հ. Գևորգյանը («Հայկական հրատարակությունները XVI-XVIII դարերի եվրոպայում»): Ժ.-Պ. Մահեն իր հոդվածում անդրադառնում է հայ միջնադարյան թարգմանական մատենագրությանը, բնութագրում դրա առջև դրված խնդիրները, թվարկում բոլոր հիմնական մատենագրական ժանրերը, որոնց հարստացման համար աշխատել են հայ թարգմանիչները՝ հայ մատենագրությունը հարստացնելով այլ ժողովուրդների գրավոր մշակույթի իմաստությամբ ու նոր երկերով (Աստվածաշունչ, Երուսաղեմի Տոնական, Պատարագամատույց, հայրաբանական երկեր, պատմագիրներ, գիտական աշխատություններ, իրավական հուշարձաններ և այլն): Յուզբաշյանը իր հոդվածում փորձում է ընդհանրացնել հայոց պատմագրության կուտակած փորձը, որն աշխարհի և հայոց պատմությանն էր նայում համաշխարհային պատմության եռնախորքի վրա: Պ. Մուրադյանը Կովկասյան մշակութային աշխարհի սահմաններում արժեքավորում է հայոց մշակույթը, ցույց տալիս նրա խաղացած դերը հարևան երկրների ու երկրամասերի մատենագրության մեջ, անդրադառնում հայոց և վրաց նախագրային և վաղ քրիստոնեական մշակույթների միասնականությանը: Գ. Կարազյոզյանը և Ֆրանսուա-Պելլիսոն Կարոն իրենց հոդվածներում վերստեղծում են Հայաստանի պատկերը ֆրանսիական ու եվրոպական միջնադարյան և նոր գրականության, թատերագրության և պատկերագրության մեջ: Հ. Գևորգյանը ընդհանրացնում է գլխի ողջ ասելիքը՝ ներկայացնելով XVI- XVIII դարերի հայ տպագրության եվրոպական կենտրոնների գործունեությունը:

Գրքի հաջորդ գլուխը կոչվում է «Նյութական մշակույթի փոխանակումներ», ուր հրապարակված են Լ. Զաքարյանի («Միջնադարյան զարդարվեստներ»), Կ.-Ա. Մուրաֆյանի («Հայ մանրանկարչության տասը դարերը (IX- XVIII դդ.)»), Պ. Տոնապետյանի («Քարի և հավատի արվեստը Արևելքի և Արևմուտքի միջև»), Ա. Բոգոյանի («Հայկական Կիլիկիայի առևտրի իրավական դաշտը»), Կ. Օտեն-Ֆրոնի («Կիլիկյան առևտուրը XII - XIV դարերում»), Մ. Բալարի («Հայերը XIII - XV դարերին Կաֆայում»), Ռ.-Հ. Գևորգյանի («XVII դարում հայերը միջազգային վաճառականներ»), Ծ. Խաչիկյանի («XVII- XVIII դդ. հայ վաճառականների հաշվենախանություններ»), Է. Թաշիրյանի և Մ. Կարապետյանի («Հայկական առևտրի Մոսկվա տանող միջանցիկ ճանապարհները XVII և XVIII դարերում») հոդվածները: Այս գլխի առաջին երեք հրապարակումներում հեղինակները քննարկում են հայոց

կիրառական արվեստի և արհեստների, մանրանկարչության և ճարտարապետության զարգացման կամխակալություններն ու փուլերը ողջ միջնադարի ընթացքում, ցույց տալիս այդ արվեստների կրած ազդեցությունների աղբյուրներն ու ճրանց ինքնատիպության ակունքները: Ֆրանսիացի ընթերցողն ամբողջական պատկերացում է կազմում հայկական արվեստի ու մշակույթի աշխարհով մեկ տարածվածության գաղտնիքների մասին:

Այս ևույն գլխի հաջորդ վեց հոդվածները մվիրված են միջազգային առևտրում հայ վաճառականության ներդրմանը: Հոդվածներում քննվում են մեզ հասած ճոտարական վավերագրերը և պետական արտոնագրերը, բացահայտվում է Կիլիկիայի հետ կապեր հաստատած առևտրականների գործունեության իրավական դաշտը, բնութագրվում է Կիլիկիայի միջնորդական դերը մուսուլմանական Արևելքի և քրիստոնեական Արևմուտքի միջև ծավալված առևտրում: Ջենովական առևտրական հանրապետության պատմության նշանավոր մասնագետ Միշել Բալարը հարուստ վավերագրական նյութի վրա ցույց է տալիս հայերի դերը XIII-XV դարերի Ջենովական առևտրում Ղրիմի հետ: Այս գլխում համառոտ շարադրանքով ներկայացվում է նաև հայերի դերը XVII դարի միջազգային առևտրական ճանապարհների վրա՝ Չինաստանից մինչև Արևմուտքի վաճառաշահ քաղաքներ, Եվրոպայում հայ վաճառականների ստեղծած գաղութներին, առևտրական ընկերություններին: Առանձին հոդվածում բնութագրվում է նաև այս դարաշրջանի որոշ վաճառականների (Սահրադ, Լազարյան եղբայրներ) գործունեության արդյունք՝ XVII-XVIII դարերից պահպանված հայ վաճառականների հաշվետույթները, ուր ամուսն առ ամուսն թվարկվում են առևտրական գործարքները:

Հայաստանի քաղաքական դիրքորոշումը XVII-XVIII դարերում շրջադարձ է կատարում դեպի հզորացող Ռուսաստան: Այս գործում հսկայական է հայ վաճառականների ավանդը, որոնց գործունեությանն էլ մվիրված է գլխի վերջին հոդվածը:

Գրքի վերջին գլուխը վերնագրված է «Դիվանագիտական փոխհարաբերություններ», ուր տեղ են գտել Ժ. Դեդեյանի («Եփրատյան մարզի հայկական իշխանություններն ու ֆրանկները (մոտ 1080-1150 թթ.)», Ա.-Կ. Մութաֆյանի («Մոնղոլական դար (1220-1320). փրկության խարիճսխ, թե՛ կործանում»), Ժ. Ռիշարի («Ավիզյոնի պապությունը և Հայաստանը»), Հ.-Ռ. Գևորգյանի («Հայ դիվանագիտությունը Պարսկաստանի և Եվրոպայի միջև Լյուդովիկոս XIV-ի ժամանակներում»), Ա. Բելլերյանի («Հայաստանը և հայերը Ֆրանսիայի առաջին կայսրության արևելյան քաղաքականության մեջ») հոդվածները:

Արևմտյան Եվրոպայի հետ Հայաստանի քաղաքական փոխհարաբերությունների, Եդեսիայի և Ամսիոքի լատին իշխանությունների քաղաքական կապերի պատմությանն է անդրադառնում Ժերար Դեդեյանը: Կլոդ Մութաֆյանն իրեն հատկացված հոդվածում անդրադառնում է այն դերին, որ ստանձնեց Կիլիկիայի Հայկական պետությունը Մոնղոլական կայսրության և Արևմուտքի մերձեցման գործում: Ինստիտուտի անդամ Ժան Ռիշարը ներկայացնում է Հոմի պապության հետ փոխհարաբերությունները և կաթոլիկ միսիոներական կազմակերպությունների գործունեությունը ևույն ժամանակաշրջանի Կիլիկիայում: Գլխի վերջին երեք հոդվածներում քննարկվում է հայերի մասնակցությունը ճոր ժամանակների Ֆրան-

սիայի արևելյան քաղաքականության XVII դարի և XIX հարյուրամյակի սկզբներին, վեր հանվում հայ դիվանագետների խաղացած դերը մի կողմից Ֆրանսիայի, մյուս կողմից՝ Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի, Եգիպտոսի փոխհարաբերություններում:

Ռ.-Հ. Գևորգյանն իր «Հայաստանը և Ֆրանսիան (1600-1914)» հոդվածում ընդհանուր գծերով ներկայացնում է նշված ժամանակամիջոցում Ֆրանսիայի հայկական գաղթօջախի գործունեությունը:

Աշխատանքը գրված է գիտական ամենավերջին հետազոտությունների հաշվառմամբ, հոդվածներն ուղեկցվում են ձեռագրական և հնագիտական նյութի լայն ցուցադրումով: Առանձնապես արժեքավոր է գրքի վերջում բերված՝ օգտագործված ձեռագրերի համառոտ նկարագրությունը, ուր տրվում է լուրաքանչյուր մատյանի մասին խոսող գրականության ցանկը: Աշխատանքից օգտվողի գործը բավականին հեշտացնում են ժամանակագրական տախտակը և գրքում օգտագործված հատուկ անունների ցանկերը: Աշխատանքի ընկալմանը նպաստում են Մութաֆյանի և վան Լոփի կազմած քարտեզները:

*

* *

Հ. Գ. - Այս գրախոսությունը պետք է հրատարակվեր դեռևս 1997 թ. Կ. Պոլսի պատրիարքության «Ծողակաթ» հանդեսում, սակայն ինչ-ինչ պատճառներով այդ հանդեսի հրապարակումը հետաձգվեց: Նկատի ունենալով ներկայացվող գրքի կարևորությունը հայագիտության համար, գրախոսության հեղինակը հարմար է նկատում այն հրապարակել բավական ուշացումով և ներողություն է հայցում «Էջմիածնի» խմբագրությունից և ընթերցողներից:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

